

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԻԱ

Տարեկան . . 12 Ձր.
Վեցամսեայ . . 6 "

ԱՐՏԱՍԱՀԱՐԱՆ

Երկու թիւ մէկ ծրարով
Տարեկան . . 14 Ձր.
Վեցամսեայ . . 7 "

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօրար
Վեցամսեայ 1.50 "
Կ Ա Ն Խ Ի Կ

Ծանոցման տողը
20 սանդիւն



Լ Ր Ա Ք Ի Ր

Ա Ձ Ք Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔԵՐԵԹԻ ԵՒ ՇՈՒԱԹ

Հ Ա Ս Յ Ե

Rédaction du journal

„Ipravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иправункъ“

ВАРНА (България)

Գրութիւնք եւ
չեն տրուիր

ՏԻՈՒՐ

ԻՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԱՌՆԱ, 28 Յուլիս

Կարգացի իրաւունքի վերջին թիւի «Աւագակային խումբը» վերանորոգել յօդուածը. շատ զգածուեցայ այն լիբր լաւ ձեւովմէն, որ կրած էր թերթի խմբագիրը. միեւնոյն ժամանակ սրտանց օխ... ըսի այն տուածին վերջաւորութեանը համար, ուր այնչափ քաջութեամբ ու վեհանքովութեամբ վարուած էիք:

Յիշեալ յօդուածին վերջին պարբերութիւնը կոչ մըն էր ժողովուրդին որպէս զի ինքն ալ իր պարտքը ձանձնայ:

Ահա հոս է որ կը տարակուսիմ:

Արդեօք ժողովուրդը պիտի կըրնայ կամ պիտի ուզէ՞ իր պարտքը կատարել հանգէպ անոր՝ որ ամէն վտանգ ոչինչ համարելով, կը փութայ պաշտպան կանգնել ազգին շահերուն, և ժողովուրդը պիտի կրնայ զգաստացնել զանոնք, որոնք կուսակցութեան անունին տակ կուգան այսինչ հերոսին կամ այսինչ ամենազինու մարդոց առնունքը արատաւորել, եղբայրասպան կուր յարուցանել և դաւեր սարքել:

Չեմ կարծեր:

Ոսկան Նազարի, Արփիարի, Չաքըրեանի, Ճանկիւլեանի դէմ դաւեր լարելէ վերջ, երբ Գուրպէթեան մըն ալ ծեծելու կամ սպաննելու փորձեր ընելու չափ կը յառաջանան, ժողովուրդը արդար զայրոյթով և լի վրէժխնդրութեամբ պիտի զսպէ՞ չարագործները:

Թերեւս ոչ:

Վերջապէս կուսակցութիւնները արդարադատ պիտի գտնուին իրենց սրբազան պարտականութիւնը առաջ տանելու համար իրենց մէջէն մաքրել, առանց աշուտութեան և նկատուածի այն ամէն աղտոտներ, որոնք ուրիշ բանի չեն ծառայիր, եթէ ոչ յիշատակութեան վարկաբեկումին:

Աս ալ կասկածելի է:

Խօսքս վերջացնելով կրօնս:

Ժողովուրդին ցոյց տուած չոր ու ցամաք համակրութիւնը դէպի այն անձերը՝ որոնք քաջութիւն ունին ճշմարտութիւնը պարզելու և ստույգութիւնները խայտառակելու, չնչաւորեալ լծէ իր պարտքը կը կատարէ, ալ հարկ եղած պարագային գործնականապէս վրէժխնդիր ըլլալու է:

ՉԱՎ

Յ. Գ. — Այսօր պատահամբ սրճարան մը կը գտնուէի. սրճարանագետը այսպէս կըսէր. — «Մենք յաճախորդներով մէկտեղ որոշած ենք այսօր հետեւ ո՛չ իրաւունքը և ո՛չ միւս թերթը հոս չը մտցնել. քանի որ ատոնք անձնական կոնքերով լիքն են»:

Այս խեղճ խօսքէն դատելով, մարդ սա համազման կուգայ լծէ՛ տակաւին չինք կըցեր հասկնալ որ ձեր մղած պայքարը անձնական հակառակութիւն մը չէ... Արդ, ի՞նչ կը սպասէք այդ կերպ խեղճ դատողութիւն ունեցող մարդիկներէ:

Նոյն

Դիտ. խմբ. — Մենք վստահ ենք թէ ամբողջ հայ ժողովուրդը այդ տեսակ մտքի Աղքատ Ղազարոսներէ կազմուած չէ:

ԱՆՎԵՐՋ ԽԵՂԱԹԻՐՈՒՄՆԵՐ

Վստահայի դատարանին մէջ պաշտօնապէս զրպարտուի միջոցը կրող լրագրէ մը շիտակ խօսք չէինք սպասել և չենք ալ սպասել: Բայց հետաւոր ազգայինները լուսաբանելու համար, հարկ կը սեպեմ բուն եղելութիւնը պատմել:

Ամսոյս 23ի առաւօտ ծովեզերեայ պարտէզը նստարանի մը վրայ նստած ատենս, յանկարծ առջեւս կը տնկուի, գաւազան ձեռքը, երիտասարդ մը եւ կը հարցնէ հայերէն «Յիշիպէ՞ն եկողը դո՞ւք էք»: Հաղիւ կը պատասխանեմ թէ այո՛, ձեռքի գաւազանով թելիս կը զարնէ: Ես որովհետեւ վրաս բան մը չունէի ինքզինքս պաշտպանելու, նստարանէն ելնելով սկսայ սուլել եւ ոտովկան մը հասնելով ձեռքակալեց զարնողը:

Այս երիտասարդը անձամբ չը ճանչնար զիս, ո՛չ ալ ես զինք: Ապուշը

գործիք եղած է իր մեծերուն ձեռքը եւ գործած է ոչ թէ դիպուածով, ինչպէս կըսուի, այլ կանխամտածութեամբ: Ինչպէս յայտնի է, Վարդո, Լեւոն Սարգիսեան եւ ընկերութեան հրահանգովը շարժած է եւ կամ Յիշիպէի դաշնակցականները իրենց Վառնայի ընկերներուն հաղորդած են իմ Վառնա հասնելու եւ յանձնարարած իրենց Յիշիպէի մէջ հինգ տարիէ ի վեր ընել չը կըցածնին հոս Վառնա ընել: Դանի որ իրենց կուսակցութեան անհամակիր գտնուած եմ միշտ եւ շատ սուրիշերուն մէջ քննադատած եմ իրենց գործեր: Բայց զուր ջանք:

Գալով զարնող երիտասարդին, որ է Տիգրան կամ ինչիկ կարապետեան Սկիւտարցի, անբաժան ընկեր Լեւոն Սարգիսեանի եւ կոյր գործիք Վարդոյն. բոլոր Վառնացիները, նոյնիսկ օտարազգիներ, խիստ լաւ կը ճանչնան կոյր անոր ի՞նչ աստիճան սրիկայ եւ լիբր ըլլալը, մանաւանդ իր քեռայր ատամնաբոյժ կողմայի հետ ունեցած դէպքին պատճառով: Ոստիկանութիւնը զինք արտաքսել ուզած էր քեռայրը սպաննել սպանալուն պատճառով: Հիմա այստեղ անգործ կը թափառի եւ կապի դաշնակցութեան գոմիտէի հաշտոյն: Ճաւալի է որ դեռ կը գտնուին հայ անունը կրողներ, որոնք իրենց լուծանքով այսպիսի սրիկաներ կապրեցնեն ազգին մէջ: Գործը դատարան յանձնած եմ եւ քիչ ատենէն իր արժանաւոր պատիժը կը գտնէ:

Իսկ հինգշաբթի օր Տ. Գուրպէթեանի պատահած դէպքը նոյնպէս բուրովին խեղաթիւրուած է նոյն թերթին մէջ Վարդոյի կողմէն, հաւանօրէն իր միւս արքանաւանդը չը վհատեցնելու յատուկ նպատակով: Եթէ Մ. Վարժապետեան բացատրութիւն պահանջել կուզէր, կրնար խմբագրատուն երթալ եւ ոչ թէ քանի մը ընկերով և՛ օր ճամբան սպասել եւ Գուրպէթեանին անցնելիք փողոցը պահուելով ու անոր երեւալուն պէս վրան յարձակիլ: Իսկ Վարժապետեանի եւ իր ընկերին Գուրպէթեանէն փառաւորապէս գաւազանահար ըլլալին կրնան վկայել տասնեակ ականատես վկայներ, ընդ որս ձեռքակալող ոստիկան Պ. Սթոյան Պլշլարով, որ հետոս անուանեց Գուրպէթեանը՝ քաջութեամբ դիմադրելուն համար:

Վերջացնելու համար երկու հարցում վարդօին: Դանի որ կըսեն թէ մատնիչ կամ թրքասէր պատժելու համար է որ ատտ անդ դաշնակցութիւններ կըլլան, ի՞նչու իրենց մէջ կը պահեն դեռ Լեւոն Սարգիսեանը, զոր նոյնիսկ իրենք իբրեւ մատնիչ ամբաստանեցին:

Երկրորդ, եթէ Վարդո իր սրտին մէկ խորշը դեռ պատուոյ եւ արժանապատուութեան ամենափոքր նշոյլը պահած է, ինչո՞ւ լոկ միջիկ կըլլեց վերջին դէպքէն յետոյ Մուսալլայի հրապարակը երեք անգամ իր երեսն ի վար արձակուած «սրիկայ»ն:

Գ. Թ.

Վառնա, 29 Յուլիս 1902

ՌՈՒՍՃՈՒԳԻ ՀԱՆԴԵՍԸ

Ամսոյս 14ի կիրակի օրը, յետ աւարտման Ս. եկեղեցւոյ, տեղւոյս Ազգ. երկսեռ վարժարանաց վիճակացոյցներու բաշխման հանդէսը տեղի ունեցաւ:

Սրահը պատշաճօրէն զարդարուած էր գորգերով եւ նշանաւոր անձնաւորութեանց պատկերներով, դասարաններէն մին յատկացուած էր աղջկանց ձեռագործներուն եւ տղայոց զծագրութիւններուն:

Հոգաբարձութիւնը թէեւ 200ի մօտ արթն հայթայթած էր ժողովրդեան հանգստութեան համար, բայց սրահին անձկութեան պատճառաւ, դարձեալ մէկ մասը ստիպուած էր ոտքի կենալ:

Հանդէսը սկսաւ ժամը 10 1/2 ին «Տէր Կեցո» մաղթանքով. վիճակացոյցներու բաշխումը տեղի կուենար հայ եւ պուլկար երգերու եւ արտասանութիւններու ընդմիջմամբ, առանց ուղուցիկ բանախօսութիւններու:

Այս տարի Դ. կարգը շրջանաւարտ կուենար երեք աշակերտներ՝ որք ինչ ինչ պատճառներով բացակայ էին:

1. Ստեփան Պոյաճեան
2. Յակոբ Մարտիրոսեան
3. Օննիկ Սինանճան

Վիճակացոյցներու բաշխումէն յետոյ տեղւոյս երգեցիկ խումբը քառաձայն Չինական (՝) մարշը երգեց, զոր ժողովուրդը խիստ գոհ մնալով, վերստին կրկնել տուաւ:

Յետոյ Հոգաբարձութեան Ատենագետը դրաւ որ բանախօսութիւն մը ընելով ըսաւ թէ «Տեղեկագրին տպուած ըլլալը, պէտք չը ձգել վարժարանին վիճակին վրայ վերստին խօսիլ»:

միայն շեշտեց Աղջկանց վարժարանի շինութեան պէտքը եւ տեղեկագրին տպուած ըլլալուն օգտակարութիւնը. որով ամէն ոք մօտէն պիտի կրնայ տեղեկ ըլլալ, վարժարանին կրթական եւ նիւթական վիճակին:

Ասիկա նորութիւն մըն է Պուլկարիոյ Հայոց համար, ինչպէս կը գրէր Սուրհանդակ եւս իր 20 Յուլիս 1049 թիւով. որովհետեւ մինչեւ հիմա այս կողմերու հոգաբարձութիւններուն

եւ թաղականներուն անձանց թանկեր էին հաշիւ եւ համար: Կերեւայ որ ասիկայ սկզբնաւորութիւն մը պիտի ըլլայ որ միւս քաղաքներն ալ հետզհետէ կանոնաւորեն իրենց գործերը եւ զարգացումը ու հիւղեցիները ժամանակին հաշիւ առնեն, մասնաւոր թէ հաշիւ տան:

Բիւզանդիոն, Արեւելք եւս սոյն տեղեկագիրէն քաղուածքներ հրատարակած էին:

Ի վերջոյ ղանրանալով ծնողաց, պաշտօնական մարմիններու եւ կրթական պաշտօնէից պարտուց վրայ ըստ թէ՛ «Իրաւ Հոգաբարձութիւնը, Ուսուցչական մարմինը աշխատեցան, ժողովուրդը իր պարտքը կատարեց, բայց ասով ամէն ինչ լինեցա՞ծ չէ՞. հայ նախակրթարանները բարեկարգ եւ ժամանակակից մանկավարժական պահանջմանց մէջ դնելու համար դեռ չափ բան կայ ընելիք. եթէ ժողովուրդը միացնէ իր ուժը, փափաքուած վիճակին մէջ պահելու համար իրենց վարժարանները, եթէ դաստիարակներն աւելի իտէալ դնեն իրենց բարձր պաշտօնին կիրառութեանը մէջ, եթէ Հոգաբարձութիւնը իր նիւթական հոգը ապահոված, բարոյական եւ մտաւորական գաստիարակութեան հոգւով զբաղի, եթէ Թաղ. Խորհուրդ, Խնամակալութիւն, ծնողք, դաստիարակ, ամէնքը դէպի միակ նպատակը դիմեն, աջակցելով միշտ իրարու, այդ օրը շատ մեծ քայլ մը առած պիտի ըլլայ անշուշտ նպատակին Հայ վարժարանը՝ որ պիտի դարձնուին մեր մատաղ սերունդին միտքերը եւ ուրիշ պիտի յառաջ դնեն ընտանիքին, երկրին եւ ազգին օգտակար զաւակները»:

Ժողովուրդը մեկնեցաւ քաղցրիկ տպաւորութեան ներքեւ, իսկ Հոգաբարձութեան անդամները ձրիաբար կը բաժնէին Տեղեկագիրները:

Հանդիսատես մը

Թուական, 25 Յուլիս 1902

ՕԳՆՈՒԹԻՒՆ ՍԱՍՈՒՆԻ

Անցեալիս փոփոխութիւն մէջ «Կարգադիր Յանձնախումբ» ստորագրութեամբ յայտարարութիւն մը հայերը հրապարակային ժողովի մը կը հրաւիրէր, ուր գործնական միջոցներ ձեռք պիտի առնէին Սասունին սպառնացող մտաւոր կոտորածին առջեւ տանելու համար: Բազմաթիւ հայեր, կուսակցական ու չէզոք փութացած էին որոշեալ տեղը:

Առեւտրային Մշտոց վարդապետն էր, որ նախապէս գովեստներ ուղղեց տեղւոյն հայերուն եւ ըստ «անասանձան զոհողութիւնները քաղ ինչ յեղափոխական գործին նուիրած իրենց խոշոր գումարներով»: Նկարագրեց Սասունի ներկայ վիճակը, «Սասունը կոտորածէն փրկելու համար երկրորդական միջոցներ ձեռք առնուած են արդէն, ըստ վարդապետը, պիտու թեանց ուղարկութիւնը հոստիւրով Հայոց կացութեան վրայ: Բայց գործնական միջոցն է Սասունցիին ձեռքը զէնք տալ որ ինքզինքը պաշտպանէ»: Առաջարկեց որ չէզոքները իրենց մէջէն յանձնախումբ մը ընտրեն եւ հանգանակութեամբ զէնք ու պաշար հայութեան Սասունին:

Այս առաջարկի մասին ժողովականներու կարծիքը ուղեւեցաւ: Դաշնակցականները իրենց բոլոր ճիգը թափեցին Մշտոց վարդապետի առաջարկութիւնը գործադրելու: Բայց Հնչակեանները գործելու այդ եղանակը փնտրեցին նկատեցին հետեւեալ բանաւոր բացատրութեամբ.

«Չկայ այսօր հայ մը որ չընդունի թէ թուրք կառավարութիւնը որոշած չըլլայ ինչպէս Սասունը

նոյնպէս բոլոր կարեւոր տեղերու հայութիւնը յաջորդաբար բնաջինջ ընել: Նոյնպէս չկայ այստեղ մէկը որ չընդունի թէ հայութիւնը բնաջինջ մէկ փրկելու միակ ու միակ միջոցը ներքին ուժ գոյացնելով հայր իր հողին վրայ՝ ինքնապաշտպանութեան գիրքին մէջ դնելը չըլլայ: այս պարագան անմիջական պարտականութիւն կը դնէ բոլոր հայոց, բոլոր յեղափոխականներուն որ մէկդի թողուն ամէն կուսակցական եւ անհատական խնդիր եւ համախմբուին միայն մէկ դրօշի տակ, միացնելով իրենց բոլոր ուժերը, եւ այսպէս կրկնապատկուած ոյժերով կարող կըլլան օգնութեան հասնիլ այսօր Սասունին, վաղը Չէլիճունին եւ միւս օր ուր որ պէտք կը տեսնուի: Հայկական դատին ազդեցութեւնը է ըսին, նորանոր բաժանումներ առաջ բերել արդէն գոյութիւն ունեցող յեղափոխական մարմիններէն անկախ ու անշուշտ յանձնախումբ ընտրել, ու անոնց միջոցաւ հայութիւնը ինքնապաշտպանութեան պարտաստելու փորձը ընել: Հնչակեաններս դժգոհ ենք արդէն այսօրուան Յեյ. մարմին. ներու անշատ գոնուիքն, ասոր համար ամէն անկեղծ ջանք ի գործ կուզենք դնել կարիքի եղանակն չափ շուտով հայութեան ցիր ու ցան ուժերը մէկ դրօշի տակ համախմբելու: ուստի մենք չենք կրնար քաջալերել այսպիսի նորանոր անշատ յանձնախումբներու երեւումը, քանի որ մտածելու եւ կամ գործելու այդ եղանակը վտանգաւոր կը նկատենք: Հնչակեանները առաջարկեցին որ վերջ տրուի չէզոք յանձնախմբի կազմութեան այդ զաղափարին, քանի որ արդէն անկարելի է չէզոքներու համար առանց յեղափոխական գործող կուսակցութեանց աջակցութիւնը, զէնք

կամ պաշար մտցնել երկրի ու եւ մասին մէջ, լաւ է որ ըսին, չէ. գործերը աշխատին իրենց ազդեցողութեամբ գործաւոր յեղափոխական մարմինները միացնելու քան ընդ մարմիններ ստեղծելու»:

Այս բացատրութիւնը Դրօշակեաններու գործին չգալով աղմուկ հանեցին: Վերջապէս վարդապետին առաջարկը քուէարկութեան դրուելով, ձայնից ահագին մեծամասնութեամբ մերժուեցաւ: Կըրկին վիճաբանութիւն աւելի տաք կերպով: ուստի ատենապետը յայտարարելով թէ ինք անկարող է այդ կերպ ժողով մը կառավարել, աթոռը ձգեց ու մեկնեցաւ: Ժողովուրդն ալ իրեն հետեւեցաւ: Ստիպուեցաւ Մշտոց վարդապետն ալ զլսիկոր սրահէն դուրս ելնել: Այս կերպով Դրօշակեաններու մէկ ծրագիրն ալ ջուրը ինկաւ:

Թ. Չ. Հ.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՅՕԳՇԱՆ, 27 Յուլիս

Խմբագիր,

Շատ լաւ պիտի ըլլար եթէ քաղաքս ալ հանդիպէր ու անձամբ տեղեկութիւն քաղէր Սէթեան անուանուող արարածի մասին: Տեղւոյն Հոգաբարձութիւնը իր 14 Յուլիսի նիստին մէջ որոշած է Սէթեանը դադարեցնել այլեւս պաշտօնէն եւ այս որոշումը պաշտօնապէս անշուշտ հաղորդուած է:

Սէթեան Հոգաբարձութեան պաշտօնագիրը առնելուն պէս դէմած է Հոգաբարձութեան մէկ կարեւորագոյն անդամին բացատրութիւն ուղղելու: Սա պատասխանած է. «Հակառակ Սիլիստրէէ քու մա-

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ

(1)

ԹԻԱՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԹԻԱՐԱՆԸ

(ՁԱՐՍ ՏԱՐԻ ԵՏԻՐ)

Հիշ, բարբարոսական, գրեթէ անյիշատակ դարերէ անտի՝ դեռ ամուր ու հսկայ պարիսպներով շրջապատուած՝ բերդ մը կայ Ղարաթարապետութեան մէջ:

Այդ բերդը այսօր թուրք կառավարութեան քիւրախն է:

Թիարա՛ն...

Օ՛հ, ըսել կուզէ՞ք թէ՛ ա՛յն գերեզմանն է, ուր մարդուս յիշողութեանէն կը ջնջուի կարծես իր պատած արտաքին աշխարհը...

Ա՛յն գերեզմանն է, ուր հոգին տառապելէ կը դադարէ... ու կեանքը՝ մթին ու խորհրդաւոր լուծութեան մը մէջ՝ կը հատնի՛, կը մարի՛... ինչպէս իւրը սպառած կանթեղ մը:

Մէկ խօսքով՝

Ա՛յն գերեզմանն է, ուր Աստուծոյ աչքն ալ... գուցէ չթափանցեր:

Ահա՛ այդ անիծեալ բերդին մէջ աքսորուած էր մեր ծանօթ թշուառ վանական՝ չորս տարիներէ ի վեր:

Բայց թէ ինչպէ՞ս՝ մահուան դատապարտուած այդ հայրենանուէր հոգին թիապարտ մը եղած էր... Ի՞նչ պարագաներու տակ կախաղանէն ազատուելով թիարանը նետուած էր՝ պէտք է վարկեան մը տխուր անցեալին յիշատակները պարպտենք:

Արդ, ընթերցողներս կը յիշեն թէ վանի եղեւնադատ ատեանը, հիմնուելով Նուրի պէյի սպանութեան վրայ, մահուան վճիռը տուած էր վանականին, եւ կը սպասէր որ Բարձր Դուռը կայսերական իրաւունքով մը վաւերացունէ անոր գործադրութիւնը:

Ահա՛ այդ միջոցին՝ վանի Անգլիական հիւպատոսը հետեւեալ իմաստով տեղեկագիր կը խրկէր իր Կ. Պոլսոյ դեսպանին.

«... Նկատելով որ այս աղետալի դէպքը մեծամեծ շարիքներու պատճառը պիտի դառնայ, կը խնդրուի որ միջամտութիւնիդ չլլանաք...»

Անգլիական կառավարութեան Կ. Պոլսոյ լիազօր ներկայացուցիչը՝ ծանուցագրով մը իմացուց Բ. Դրան ապագայ ծանր պատասխանատուութիւնն եւ երկպառակութեան մը ամբողջ պարագաները:

Բարձր Դուռը ի՞նչ ընէր... Ինչ մտածէր:

Ուստի հարկադրուեցաւ տեղի տալ... հարկադրուեցաւ բեկանիլ վանականին դէմ արձակուած եւ կայսերական իրաւունքին ենթարկուած մահաւճիւնը:

Եւ որպէս զի դատական օրինաց տրամադրութիւնը ժողովրդեան աչքին առջեւ անգործադրելի չի նկատուի, Բարձր Դուռը գաղտնապէս Կ. Պոլսոյ

բերել տուաւ վանականն ու յետոյ Ղարաթարապետութեան բերդը փոխադրեց:

Բերդին մէջ ամէն ազգէ, ամեն ցեղէ եւ միայն գամայն մարդկային ամեն դատապարտէն ալ անձեր կային, որոնք դատապարտուած էին ցկեանս տաժանակիր աշխատութեան:

Վանական, երբ այդ անկեալ մարդերու մէջ մտաւ, գրեթէ ամբողջ մարմնովը սարսափ... իրեն այնպէ՛ս երեցաւ որ առաւապելական դժոխքն էր անոր կը բացուէր իր աչքին՝ բովանդակ արհաւիրքովը պատկերացած:

Նայեցա՛ւ... այո՛, նայեցաւ անոնց վրայ այնպիսի՛ նայուածքով մը, ինչպէ՛ս կը նայի անցորդ մը սեւ օձի մը վրայ...:

— Ո՛հ, Աստուած իմ... մրմնեց վանական ինքնիրեն... եւ ի՞նչ պիտի ընեմ այս գազաններու մէջ: Ասոնց աչքերէն արլւն կը ժայթքէ... մէկ խօսքով՝ ասոնք սոսկալի մարդիկ կերելին, եւ ինչպէ՞ս պիտի ապրիմ... Կրո՞ղ... իցի՛ւ թէ կախաղանի վրայ միւռնէի՛ վերջին անգամ աչքերս սիրելիներուս յառա՛՛քան երբէք այս ահաւոր դժոխքին մէջ քաջաւուրդեւ դատապարտուիմ...:

Այսպէս, վանական աղաւառու ըլլալով մահուան վճիռէն, ազատուած ըլլալով կախաղանի անարգ օղակէն՝ որ իր վիզը պիտի իղզէր աներեւոյթ դաւաւրումներու մէջ, դարձեալ գոհ չէր... ու նախա՝ մեծար կը համարէր մեռնիլ, քան թէ առանկ թիարանի մը տսմանակիր աշխատութեանը դատապարտուիլ: Հետեւաբար, սպանդանոցը քաջաւուրդ անմեղ գառնուկի մը պէս, հաղաւ սեւ շապիկը... ուսին վրայ դրաւ թիապարտութեան երկաթէ ծանր լուծը:

սիւր մեզ ուղղեալ տնտեսական փոփոխութիւններուն, մենք քեզ պաշտօնի կոչեցինք, յուսով որ պիտի զգաս թերութիւններդ և պիտի ուղղես դուն քեզ: Սակայն, ցաւօք կըսեմ թէ ինչ որ էիր նոյնը մնացիր և բիշ մըն ալ աւելի: Գու ընթացքդ զքեզ պաշտօնանկ ըրաւ. շատ տեղերէ քու մասիդ գանգատագրեր եկած են ինձ. հոս մեր քաղաքը ալ տեսակ թիւացք մը ունեցար որ թէ մեր և թէ օտար ժողովրդեան հակակրօնքը քեզ գրաւեւեցիր» և այլն:

Այդ ինկած արարածը ի պարսիկ Տէր Ստեփան չոր ուղղած գրոյն յար և նմանը Պուզընի քահանայներուն ալ ուղղած է եղեր: Անոր քաղաքիս մէջ ունեցած պախաւրակի ընթացքի մասին իմօտոյ պիտի գրեմ ձեզ:

Տեղւոյս 40ի չափ գաղթականները ցաւ կը յայտնեն թէ ինչո՞ւ չեկաք հոս ալ: (*)

ԼԻԿ.

ԲԱՐԻՉ, 5 Օգոստոս

Թրքական զոհաբերութիւն. — Չեմ յիշեր ո՞ր կենդանիին համար կըսեն թէ չափազանց զգոյշ է բայց այդ կենդանին պարզապէս խաչ է ըրեր թուրք կառավարութեան զգուշութեան ըով: Այսպէս թուրք կառավարութիւնը, զգուշութեան համար, երբ իր հպատակներէն մին—մանաւանդ եթէ հայ լինելու դժբաղդութիւնն ունենայ այն — արտասահմանէն հայրենիք կամ Կ. Պոլիս կը վերադառնայ, իր ծնողաց երեսը դեռ չը տեսած, կը զրկէ զայն Կ. Պոլսոյ զնտան:

(*) Ժամանակի եւ դրամի խնայողութիւնն ընել ստիպուած ըլլալնուս պատճառաւ:

Ծ. Խ.

ներու... ճարտարապետութիւնը ուսումնասիրելու (.) ու ուսումնասիրութիւնը կրնայ տեւել, պարագայներուն համեմատ, 8 օրէն մինչեւ 80 տարի:

Վերադարձող Հայերու բանտարկութեան միակ պատճառը ճարտարապետական ուսմանց հոգըն է. եթէ միայն այդ լինէր թուրք կառավարութիւնը անշուշտ վաղ կանցնէր անկէ, ուրիշ պատճառ մը կայ, որն գերագոյն զգուշութեան համար է: Թուրք կառավարութիւնը կը հաւատայ թէ արտասահմանի մէջ ապրած հայը, ազատ խօսքեր, ազատ թերթեր, ազատ բաներ, լսած, կարդացած ու տեսած կը լինի և անկէ քչիկ մը իր մէջ պահած կը լինի, և մանաւանդ, ո՞չ մանաւանդ... ազատ ոգ ծծած կը լինի, ուստի պէտք է կամայ ակամայ այդ ազատ ոգը դուրս հանել հայու փորէն... բանտի մէջ և անոր կրծքին թոքերուն մէջ լեցնել թրքական ոգ. իսկ այս վրիշտ ոգին միակ արտադրիչը, կեդրոնական ամբարն է... սրբազան բանտը (.) — իսկ եթէ պատահի որ հրաշքով մը մէկը բանտէն դուրս ելլէ կը կարծէք թէ իր սիրելիներու գի՛րկը կը վերադառնայ. քա՛ւ լիցի... կառավարութեան պաշտօնեաներէն մին քեզ նաւի մը մէջ կը դնէ ու երթաւ քարով մը ըսելով կռակը քեզ կը դարձնէ, Ո՛ւր կուգես գնայ, բայց ո՞չ հայրենիք:

Այս բանը պատահեցաւ վահան թէքէեան անուն երիտասարդի մը որ ո՞չ գովաբանի, ո՞չ գալաքաձի և ոչ ալ ֆետայի էր, այլ ժամանակ մը Եւրոպա կեցած էր, ու վերադարձաւ Կ. Պոլիս. թուրք հոգին վրայ ոտք դնելուն պէս առօք փառօք բանտ տարուեցաւ, ուր 15 օր քաւելէն յետոյ, ոստի-

կանը նորէն նաւ տարաւ. երիտասարդը և զրկեց Եւրոպա, յանձնարարելով որ Սուլթանի կենաց համար աղօթէ: Դ. Թէքէեան Բա. րիզ կը գտնուի երեք չորս օրերէ ի վեր:

Զգուշութեան համար...
Մելիք Ս. Դաւիթ-Բեկ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Որքախնամ Ընկերութեան

Քանի մը օր առաջ ընկերութեան գանձապետ Տիար Խ. Ազնաւորեան հրապարակաւ հրաժարած էր իր պաշտօնէն, Գործ. Ժողով ինկատի ունենալով Տ. Խ. Ազնաւորեանի ընկերութեան հիմնարկութենէն ի վեր ուղղամտօրէն վարած պաշտօնը և թէ Գործ. Ժողովոյս պաշտօնավարութեան շրջան լրանալու մօտենալն, բոլորովին մերժեց և չընդունեց իր հրաժարականը:

Ուրախ ենք յայտարարելու թէ յարգելի պաշտօնակիցնիս Տ. Խ. Ազնաւորեան յօժարեցաւ իր հրաժարականը հոս առնել և մեր հետ շարունակել պաշտօնը մինչ յառաջիկայ Հոկտեմբեր մէկը, Ընդհանուր Ժողովի գումարումն և ցընտրութիւնն ուր Գործ. Ժողովոյն:

Մնամք Յարգանքօք

Ի դիմաց Գործ. Ժողովոյ
Աստուածապիւր Վ. Ասենապետի
Յ. Կ. Ճանկիրեան Ս. Մարինեան
Վառնա, 27 Յուլիս

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Պոլսոյ Պատրիարքարանի խառն Ժողովը անցեալ երեքշաբթի օր գումարուեցաւ Ղալաթիոյ խորհրդարանը: Պատրիարքը բացակայ

էր և իր հրաժարականը պաշտօնապէս ժողովին ղրկած:

Այդ առթիւ Թաւրի Պոլսոյ թղթակիցը Օգոստոս 7 թուականաւ հետեւեալը իմացուցած է:

«Մէկ քանի հպիսկոպոսներ և Ազգային Ժողովոյ անդամներ յանդիմանած են Հայոց Պատրիարքը շատ թույլ գտնուելուն Լուսաւորչական Հայոց դէմ ձեռք առնուած խիստ միջոցներու ջնջման համար, և ստիպած են հրաժարիլ: Բայց Դուռը մերժած է հրաժարագիրը Սուլթանին հաղորդել: Դժգոհ մաւր այժմ կուզէ Պատրիարքը դուրս ելնելէ ու պաշտօնավարելէ արգիլել, այս կերպով հարկադրելու համար Սուլթանը որ անոր հրաժարականը ընդունի»:

Օրմանեան պատարագելու համար եկեղեցիներէ ընդունած հաւելներն ալ մերժել ստիպուած է. այնպէս որ տունէն դուրս չէլնիր:

— Մանչեսթրի Տ. Թորոս Զուգայեցի քահանայ վերջապէս տեղւոյն թաղ. խորհրդոյ դէմ իր բացած դատէն ետ կեցեր է, վեհ. կաթողիկոսին անուամբ Եւրոպայի առաջնորդին բրած այն սպառնալիքին առջեւ որ եթէ դատը շարունակէ, ու է տեղ պաշտօն պիտի չկրնայ գտնել:

— Պաքուէ կը գրեն Յուլիս 4ին. «Ս. Էջմիածնից մարդ է եկել այս տեղ տպարանական գործիքներ տանելու: Լաւ չեն նկարագրում Ս. Էջմիածնի գործերի դրութիւնը: Միաբանութիւնը շատ վշտացած է տեղի ունեցած բաների համար: Խորէն էֆ. խորիման լաւ հունձք է անում: Տգէտներին ձեռնարկել է տալիս: Կամիլաւաների, խաչի, ծաղկեայ փիլոնի համար շահաւէտ հրապարակ կայ այն տեղ: Այն բան խորէն էֆ. ի խօսքովը վճռուում է: Ս. Հայրապետն ալ:

Երկու ամիսի չափ շարունակ լուռ ու մունջ գրութեան մը մէջ անցուց: Իրեն յանձնուած աշխատութիւնը կատարեց, առանց գանգատելու, առանց դժգոհութիւն մը յայտնելու:

Թիւրքական մէջ Զէքի անունով պաշտօնեայ մը կար, որուն պարտականութիւնն էր հսկել կալանաւորներու աշխատութեանը վրայ: Այս պաշտօնեան արապ մըն էր: Չափազանց բարեսիրտ մէկն ըլլալով, բոլոր թիւապարտներուն սիրելի եղած էր: Զէքի ամենէն աւելի սիրած էր վանականը: Այդ պատճառաւ, սկսած էր տարբեր աչքով նայիլ անոր վրայ ու մինչեւ իսկ աշխատութեան բաժինը թեթեւցունել:

Օր մը, երբ վանական բերդին ետեւը գտնուած ապառաժներէն քարեր կոտորուելու զբաղած էր, Զէքի մօտեցաւ անոր եւ իր ձեռքը կամաց մը ուսերուն վրայ դնելով՝ ըսաւ.

— Եկու՛ր ինծի... այսօր չպիտի աշխատես:

Վանական զարմաքով մը բարի պաշտօնեային աչքերուն մէջ նայեցաւ, եւ կարծես չհասկցաւ թէ ի՞նչ ըսել կուզէր ան:

— Կուգե՛մ որ պատմես ինծի քու կեանքը. շարունակեց Զէքի մտերմական թրթռուն ու անկեղծ ձայնով մը: Դուն չարագործի մը չես նմանիր... թիւապարտ մը ըլլալու կոչուած չես... խորհրդաւոր մէկը կերեւիս:

Վանական բոլոր հոգիովը սարսուռ մը զգաց: Այդ մտերմական ձայնն, որ կը հնչէր իր ականջին՝ թիւապարտ մը խորէն, յանկարծ սփոփանքի մը պէս բան մը բերած էր հետը...

Ուսկից կուգար այդ մտերմութիւնը... արդեօք խղճէն թելադրուած էր ան, եթէ ո՞չ նենգալի դի-

տաւորութիւն մըն էր բրածը... այդ մասին չփոխ, անորո՞շ ու միջին էր իր տրամադրութիւնը:

Ու առանց ո՛րէ՛ւ առարկութիւն ընելու Զէքիի ետեւէն գնաց:

Զէքի բերդին ապառաժուտ մասերու մէջ հանդիւրդ վայր մը գտաւ եւ պատուիրեց վանականին որ սպասէ հոն. իսկ ինքը յառաջացաւ գէպի կալանաւորներու կողմը՝ գիտելու համար թէ վերատեսուչը չէր եկած...

Երբ տեսաւ որ վերատեսուչը չէր եկած ու կալանաւորները գլուխին ծած կաշխատէին, դարձաւ վանականին մօտ եւ նստեցաւ:

— Պատմէ՛... ըսաւ Զէքի. շատ հետաքրքիր եղած եմ գիտնալու թէ ի՞նչ պատճառաւ քեզի նման անձ մը հոս եկած է:

Վանական խորունկ հառաջանք մը հանեց սրտէն. ի՞նչ ըսէր, ի՞նչ պատմէր...

Մանա՛ւանդ՝ ի՞նչ օգուտ պիտի ըլլար իրեն:

Այդ ստորակարգեալ պաշտօնեան ի՞նչ բարիք կարող էր ընել... Ո՛չ ապաքէն ցկեանաւ տաժանակիր աշխատութեան դատապարտուած մէկն էր ինքը... ո՞չ ապաքէն ալ ամեն յոյսը կորած էր իրեն համար: Օ՛հ, երբ մէկը վերքէ չհասկնար, ի՞նչ հաճութեամբ ցաւերը ըսես անոր...

Այս նակաղէմ, գրեթէ աղերեկ մտածումներու մէջ ինչապէ՞ս մէկէն իմէկ չկրցաւ միջոց մը գտնել: Յետոյ ինքնիրեն գալով՝ հետեւեալ շինծու պատմութիւնն ըրաւ.

— «Դատապարտուած եմ իբր ոճրագործ...: Ասիկա յայտնի է: Սակայն կառավարութեան առջեւ չկրցայ ապացուցանել թէ ես ոճրագործ մը չեմ...

— Ինչպէ՞ս... միթէ՞ առանց վկաներ ունենալու

ոճրագործ անուն տուին քեզի, ընդհատեց Զէքի միամիտ գատողութեամբ մը:

— Այդ ըսել չիմ ուզեր... վրայ բերաւ վանական կիցկուր բացատրութիւնով մը: Ընդհակառակը, ըսել կուգե՛մ թէ կառավարութիւնը մերժեց ազատութիւն տալու ինծի՝ որ չարագործ ձեռք մը ջախջախած էր...

— Աւագա՞կ մը սպաննեցիր... չեչտեց Զէքի որ վանականին ըսածներէն որոշ բան մը չէր հասկնար:

— Այո՛... մտնաւանդ այնպի՛սի աւագակ մը, որուն ձեռքին մէջ խաղալիք եղած էր մարդուս ճակատագիրը:

Բարի Արապը տօգուեցաւ... կարծես թէ վանականին ձայնը ցնցեց իր ամբողջ էութիւնը:

Խօսակցութիւնը շարունակելու վրայ էր, երբ հեղուէն ձայն մը լսուեցաւ... իր անունը կուտային:

Ուստի աճապարեց պաշտօնին գլուխը վազելու:

Վանական իր տեղը դառնալով, առաւ ձեռքը հաստ ու ծանր մուրճը եւ սկսաւ աշխատիլ: Այդ կոտորած քարերը զօրանցիկ շինութեան համար էին:

(Շարունակելի)

կարծես թէ ուրիշ գործ չունի ը-
նելիք, շարունակ ճամբորդում է։»

— Վեհենայի Մխիթարեան Մի-
աբանութեան երէցագոյն անդամ
Հ. Թադէոս վ. Թոռնեան ընդհա-
նուր աթոռակալ կարգուէր է նոր
Միաբանութեան, մինչեւ որ հան-
գուցեալ Այտընեան Աբրահամ
յաջորդէ ընտրուի։

— Զմիւռնոյ Հայոց Հիւանդա-
նոցի վերի յարկէն թիֆօն տա-
ռապող Աթիօն-Գարահիսարցի 20
տարեկան երիտասարդ մը, անց-
եալները սաստիկ տաքութեան աղ-
ղեցութեամբ ինքզինքը պատու-
հանէ վար նետեր և հինգ ժամ
վերջը մեռեր է։

— Կիլիկիոյ Կաթող. ընտրու-
թեան պատուիրակ Տ. Մովսէս Ե.
պիսկոպոս Կիւմքիւքեան զեռ-
մինչեւ այսօր Պոլիս կը գտնուի.
այս յապաղման պատճառը որոշ
չգիտցուիր առայժմ։

— Պրուսացի պղնձի վաճառ-
կան Զովհաննէս էֆ. Կադեան և
իր կինը Գում-Գարուի մէջ իրենց
ունեցած երկու տունները 600 ոսկի
արժողութեամբ, նուիրած են Ազգ.
Հիւանդանոցին։

— Պուրկաղէ մեզ կը գրեն թէ
Պ. Ռոստոմ Պուրկաղ եկած է ու
նպատակ ունի դրամ հաւաքելու։

Արդէն տէրօրական գործադրու-
թիւններու մէկ նպատակն ալ դրամի
հաւաքումը դիւրացնելն է. որ-
պէս զի ժողովուրդը առարկելու չը
համարձակի։

ՀԱՎԱՏԻՍԱԹԸ ԲՕԼԻԹԻԳԻՅԷ

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Հապէշ գերաւունքն հէյեթի մու-
րախասէսի Սթանպուլ կէտիւն օ-
լուպ, գրաւ Մէնէլիքտէն պիր մէթ-
թուպ Սուլթանա թագաւոր իթմիշ
տիր, իշպու մէթթուպլէ Մէնէլիք
Երուսաղէմտէքի հապէշ մանաս-
տըրընը եվլէթի իմթիաղարընը
եէնիլէմէք իթթէյօր։

— Լիբանան մէսէլէսի իշիւն
Սթանպուլ էլիլէրի թէճէմիւ օ-
լընտըլար։ Պապը Ալի Երուսաղէ
Գիւղայը Լիբանան պէյ նասպ
իթմէք իթթէյօր. պու զաթ սա-
պըզ վալի Ֆրանգօ բաշանըն մախ-
տուը տըր։

— Մաքթիթիա գօմիթէսիին
սապըզ ըէյիսի Մ. Պօրիս Սարա-
ֆօզ քէնտի տօսթլորընա պէյան
իթմիշ «գօմիթէնին պուլնտան
սօնրա Պուլկարիտա հիշ պիր իշի
գալմամը տըր. եալընը Մաքթե-
թիթիա տախիլիտէ կիլի թէշթի-
լաթ եարմագ վէ Էվրօթլորըն
մէնֆաթթընա տօգանմագլէ պէօ.
յիւք տէվլէթլէրի թահրիզ իտէ.
պիլիլիք»։

— Կիրիտ առասընըն ումու-
բօսթա իթիհատընա տախիլ օլ-
մասը վէ Կիրիտի տարալ իթթիկի
բարալարըն տէվլէթլէրտէն թանըլ-

մասը թիւրքիայա բէք ֆէնա
թէէսի իթմիշ տիր։ Պապը Ալի
քէնտի էլիլէրիին թալիմաթ վէ-
րուպ։ Սուլթանըն հուգուգը հիւ-
քիւմքանիսին թէմիինի վատի-
տէն տէօրթ պէօյիւք տէվլէթլէրէ
բրօթէսթ իթթիթիւն տիր։ Վէ
թիւրք բօսթալ օրըն՝ Կիրիտ յուլ-
լարընը թաշլուրն մէթթուպլէրէ
քազաւա ալմալարընը էմր իթմիշ
տիր։

— Մանասթըր վիլայէթիինտէ
Արնապուտար զատտարլըզ իճրա
իտէյօրլար։

Ասըլարը թագիպ իթմէք պէհա-
նէսի իլէ Էհալիտէն բարա իսթէ-
յօլլար, վէրմէյէնլէրին պուրնու վէ
դուլաղընը քէսէլլէր իմիշ, իտիկա
քէօյիւնտէ 6 քիշի վալմուշլար,
իքիսի մէթթէպլի։

— Բրէնա Բէշտա վէ Ճէմալէտ-
տին Էֆէնտիլէր կիճէ տէրտէսթ
օլընուպ, Չըրաղան սէրայընա մահ-
պուտ իտիլմիշլէր։ Սուլթան Սու-
րաթըն իսէ Երուսղ սէրայընա
նազ օլընտըրը ինկիլիզ կազէթա-
լարընա պա թէլէկրաֆ պիտիլի
միշ տիր։ Միւշարիլէյ հիթ բրէնա-
լէր վէլիտա տալըլըլար։ Վէ կէօնա
Էվրօթա տալըլընա կէնճ. թիւրք.
լէր իլէ մուխապէրտէ վէ անլէրէ
բարա եօլլամագտա ըմըշլար։

— Մէհահիպ միւտիլի Պառ-
րիարք Օրմանեանըն իսթիֆանա-
մէսինի կէրի եօլլամըշ, վէ անըն
թագրիլլէրին թէտգիգի նազարա
ալմագ իշիւն գօմիսիօնը մախսուս
թէշթիլ իտիլէճէկիին պէյան իթ-
միշ իսէտէ, Օրմանեան իսթիֆաթը
իւզէրինէ ըսրար իտուպ կէրի ալ-
մամըշ տըր։

— Իզմիրտէ տէրտէսթ օլընան
Աբրահամեանըն եէտինտէ Մ. Ա.
մերիկա բասաթօրթը պուլընտը-
ղընտան, իսթիլիթագ օլընտըրը
էսնատէ գօնսօլօս տախի հազըր
պուլընմըշ տըր։ Մէրգուլմըն իւ-
զէրինտէն 3 մէթթուպ պուլընմըշ.
պու մէթթուպլէրլէ թիւճարարտան
բարա թալէպ իտէճէք իմիշ, Գօն.
սօլօս Աբրահամեանը մուհաֆազ
իտէպիլմէք իշիւն Սթանպուլ էլիլի-
սինտէն թալիմաթ իսթէմիշ. զի-
րա անըն բասաթօրթը բէք նի-
ղամը կէօրիւնմէմիշ տիր։

ՏԱԽԻԼԻՑԷ

Մաքթիթիա գօմիթէլէրինին
մէճիսի ումուլիսի բազար կիւնիւ
աշլըմըշ տըր։

Պուլկար հիւքիւմէթի պու պապ-
տէ Պապը Ալիին բրօթէսթիին
ճէվապէն, տէմիշ տիր «գանուըն
շիլթէթլէրէ վէրմիշ օլտըրը սէր-
պէստիլթ տէրէճէսին թէճալիզ
իթմէմէք շարթը իլէ գօմիթէնին
մէճիսիին մէնն իտէմէյիլ. Էկէր
գանուըն մուխալիֆ հարէքթիտէ
պուլընըլար իսէ, միւթէճասիլ-
լէրի թէտալ իթմէյէ վէ շիլթէթի
տաղըմայա օ վագըթ մէճպու-
րիլլէթ հասըլ օլուր»։

Ի Ո Ւ Ն Ք

Մարուֆ վէ նամտար բուս Ֆի-
լօֆօթը վէ մուլիլիֆի գօնթ թօլս-
թօ Բուսիանըն Տախիլէ վէ Ատ-
լիլէ նազըրլարընա պիրէր մէթթուպ
եազուպ, հիւքիւմէթին Լհալիէ
գարշը թէվիթագաթընտան տօլար
բրօթէսթ իտէրէք տէմիշ տիր.
«Եալընըզ գապահաթլը պէն իմ.
զիրա տէվլէթէ զարարլը կէօրիւ-
նէն իտէալարը պէն՝ եազմըշ օլ-
տըրըմ քիթապլարլէ՝ Էհալիլէ Էօկ.
րէտմիշիմ. Էկէր հիւքիւմէթ օ՛ ի.
տէալարա գարշը ճէպը իսթիմալ
իթմէք իգթիզա կէօրիլօր իսէ,
օնուըն քէօթիւնէ լաղըմ վուր-
սուըն, եանի պանա. պէն ասալ կէ-
րի տուրմալաճաղըմ հիւքիւմէթին
մագարաթլը կէօրալիկի պու եօլ-
տան, զիրա պէնիմ վագիֆէմ վիճ-
տանըմ վէ Ալլահ իշիւն Էօլլէ էմր
իտէյօր»։

ԻՆԿԻԼԹԷՐԱ

Օգոստոս 9 տա գրալ Էտուար-
տըն գրալիցա Ալէքսանտրա իլէ
պէրապէր թաճ կիլիմէք զիլլէթի
վէ այնը բուհսինի իճրա օլընտը.
Գրալ վէ գրալից սէրայտան պէօ-
յիւք քիլիսէյէ կիրէնէ գատար պիւ-
թիւն եօլ պօյուլնտա հէր սընըֆ
Էհալիտէն «հօրա» Նիտալարը իլէ
ալլըշլանտըլար, Գրալըն սըհէթի
պէր քէմալ կէօրիւնիլ իտի, Այնը
բուհանի կիւնտիւզ 12ի 40 կէ-
շէրէք պաշլամըշ վէ սաաթ 2 է
գատար տէվլամ իթմիշ. Ֆազաթ
էսնայի ալընտա Արքէպիսկոպոս
պիրտէն պիրէ պալկըն գալմըշ ի-
սէտէ, պիր գաշ տագիգա սօնրա
եինէ քէնտիսինէ կէլուպ այնը իք-
մալ իտէպիլմիշ տիր։

Պիլ ախիլէ գրալ վէ գրալիցա
քիլիսէտէն սէրայա կէթմէլէրի էս-
նատէ Էհալիտէն ֆէվզէլտտէ սէ-
վինճ նէտալարը վէ հուրալարլէ
գապուլ օլընմըշլար։

Իշպու պէօյիւք զիլլէթտէ Էճ.
նէպի տէվլէթլէրտէն մախսուսի
մուրախասար պուլընմայուպ, եա-
լընըզ Լօնտա սէֆիլլէրի հօղըր
պուլընտըլար. Գրալըն խասթալը-
ղընտան Էվլէ շէհրին հէր թարա-
ֆընտա հազըրլանմըշ վէ հազըր-
լանմագտա օլան զիլլէթ վէ թէն-
վիրաթըն Էքսէրիսի գալտըրըլմըշ
օլարագ, թանթանասըլ սուրէթտէ
այիլլէր վէ ըսմի վիզիթալար
իճրա օլընմըշ տըր. զիրա գրալ
խասթալըղընտան նաշի պու եօլ-
տա օլմասընը աբզու իթմիշ վէ օ-
նա կէօրէ թալիմաթ վէրիլմիշ
իտի։

Գ Օ Ր Է Լ Ա

Բէթրապուրկտան Օգոստոս 6
թարիլի պիր թէլէկրաֆա պի-
նան, խարպիտէ գօրէլա կիւն
պէ կիւն շիտտէթ քէսպ իթմէքտէ
տիր. ու իլլէթ Մանչուրիա չը-
մէնտըֆէրինտէ իլլէյէն Չինի իշ-
ճիլէրտէն իլլէրի կէլմիշ. կիւնտէ

100 տէն 130 քիշի Էօլմէքտէ. պու
Էօլմէլէրին օնտա պիրի Բուս վէ
տիկէլլէրի Չինի տիրէր։

— Մըսըրտան տախի գօրէլա է-
լան բազլէնմէմիշ. Օգոստոս 7 տէ
Գահիրէտէ 13 քիշի Էօլմիւշ տիր։

ՏՕՔՕՐ ԹՈՐՈՍԵԱՆ

Մաւնագեւ ճննդալան գործարա
Ասց եւ գաղտնի ճննդալան

Երեսուն եւ հինգ տարինէրէ ի վեր
արհեստին մէջ ստացած գործնական
փորձառութենէն զատ վերջերս շուրջ
երկու տարի ալ Բարիզ ֆալալի իր
մասնագիտութիւնը կատարելագործած
է։ Վաղեմ ճարտար քիշկի համբաւը
զինք վստահի հասարակութեան յանձ-
նարարելու պէտք չը ձգեր։

Կը բնակի Տիւրիս Նիքօլայէֆի տու-
նը, Լազարաքա փողոց թիւ 558,
Բ. թաղ։

Հիւանդ կընդունի առաւօտները
միայն ժամը 10էն մինչեւ 12։

« ՀԱՅ ՀԱՆԴԷՍ »

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ե. Ե. Գ. Բ. Ա. Կ. Ա. Ե.

Կիւսմանակ

Տ. Տ. Լեւոն Բաշալեանի եւ Ար-
փար Արփարեանի խմբագրութեամբ
եւ Երուսղ Նահապետեանի հրատա-
րակչութեամբ վեհտիկի մէջ սկսած է
հրատարակուիլ Հայ Հանդէս անունով
կիսամսեայ թերթ մը ազգային եւ
գրական։ Խմբագիրներուն գրական
ծանօթ կարողութիւնը արդէն յանձ-
նարարութեան պէտք չը ձգեր։

Բաժնեդիրը եւրոպական բոլոր եր-
կիրներու համար տարեկան 10 եւ
վեցամսեայ 5 ֆրանք է. իսկ Ամերի-
րիկայի համար տարեկան 2 եւ վեց-
ամսեայ 1 տօլար։

Հասցեն՝

« ՀԱՅ ՀԱՆԴԷՍ »

Գաւէդդա քութալ 341

(Իտալիա)

Վեհեթիկ

ՄԵԾ ՁՈՒԼԱՐԱՆ

Ի ՔԵՕՍՏԷՆՃԷ

Գործարանի մէջ կը ծուլուին եր-
կաթեայ, պղնձեայ եւ ուրիշ մետաղ-
ներէ եկեղեցւոյ մեծ ու փոքր զան-
գակներ, երկրագործական եւ այլ
մեքենաներու կտորներ, եւ կը շին-
ուին այս վերջիններուն յատուկ դա-
նակներ, կառքի անիւներու պոլիշեր
(7էն մինչեւ 13 թիւ), մեքենաներու
կրակարաններու կառկարաններ, որոնց
պատրաստն ալ կը գտնուի։ Վերջապէս
մեքենական ու եւ գործիքի պէտք
ունեցողներ կրնան դիմել մեր հետեւ-
եալ հասցէին, վստահ ըլլալով թէ
յանձնարարութիւնը անմիջապէս կը
գործադրուին դիւրամաղելի գնե-
րով։

Հասցէ

Արշակ Կ. Խաչատուրեան

Fabrique des cloches

Obor nou № 41

Constanta

ԾԱՆՈԹ. — Այս գործարանը կը
փնտէ հայ աշակերտներ որոնք փա-
փաք ունենան լաւ արհեստ մը սով-
բելու։

Ա Զ Դ

Արհեստէն լաւ հասկցող սրճա-
գործ (Թահմի) մը կուզուի, գո-
հացուցիչ վճարումով։

Դիմել մեր խմբագրատունը։

Одговорникъ Н. Драгулевъ

Печ на Хр. Н. Войниковъ—Варна